ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1430 10.07.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հուլիս ամսին այցելելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տաշիրի ՁՊՎ արձանագրվել էր.

1. Եվս մեկ անգամ արձանագրեց, որ Տաշիրի ՁՊՎ-ում սպասքը չի օգտագործվում, որովհետև ինչպես Դիտորդական խումբը արձանագրել էր 2010թ-ից մինչև 2013թ-ը, այնպես էլ 2014թ-ին առկա է նույն 2 գդալ, 3 բաժակ և 2 ափսեն, որոնք չեն թարմացվում, ինչպես մնացած ՁՊՎ-ներում:/ *փաստը հաստատող լուսանկար- 1*/:

2. Քննչական սենյակը կահավորված է ոչ ճիշտ: Խնդիրը կայանում է նրանում, որ սեղանի մոտի աթոռները տեղադրված են ոչ ճիշտ: :/ *փաստը հաստատող լուսանկար- 2*/:

3. ՁՊՎ-ում բացակայում էր ջրամատակարարումը:

4. ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տաշիրի բաժնի միջանցքում քաղաքացիներին հասանելի տեղում բացակայում էր <<Ի գիտություն ձերբակալվածների հարազատներին>> պաստառը, որը արդեն կրում է համատարած բնույթ:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 2923
14 07 2014 թ.

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ... ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 5600
«14» 07 2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 1837 << 30 >> 07 2014թ.

Ձեր 10.07.2014թ. թիվ 2621/1430 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հուլիս ամսին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Լոռու մարզային վարչությունում, որի կապակցությամբ տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

1. ՁՊՎ-ի սննդի տաքացման սենյակում, ալյումինե սպասքից բացի պահարանում առկա են եղել պլաստմասսայե մեկանգամյա օգտագործման սպասք 10-ական լրակազմով, որը թույլատրելի է ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրի ներքին կանոնակարգ>>-ի 26-րդ կետի 3-րդ ենթակետով: Այնուամենայնիվ, սննդի տաքացման սենյակի սպասքը թարմացվել է:

2. ՁՊՎ-ի քննչական սենյակում սեղանի մոտ տեղադրված են 3 աթոռներ, որոնք ներքին կանոնակարգի 121-րդ կետի պահանջի համաձայն ամրացված են հատակին:

Հարկ է նշել, որ ՁՊՎ գործունեությունը կանոնակարգող որևէ իրավական ակտով չի սահմանվում քննչական սենյակի աթոռների դասավորվածությունը և դրանց դասավորվածության հանգամանքով չեն խախտվում հարցաքննվող անձանց իրավունքները: ՈՒստի դիտորդների խմբին առաջարկվում է իրենց գործունեությունը ծավալել ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանով նախատեսված դրույթների սահմաններում:

3. Ոստիկանության Տաշիրի բաժնի ջրամատակարարումն իրականացվում է ժամային գրաֆիկով և դիտորդների խմբի այցելության ժամանակ ջրամատակարարումը դադարեցված է եղել: Սակայն ՁՊՎ-ում տեղադրված է 100 լիտրանոց պլաստմասսայե

ջրի տարրա, որի ջուրը պոմպի միջոցով մատակարարվում է խցեր, սանհանգույց և լոգարան:

4. <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառը դիտորդների խմբի կողմից ոստիկանության Տաշիրի բաժնին տրամադրվել է դեռևս 2011թ-ին, որը փակցված է եղել բաժնի նախասրահի պատին: 2013թ. բաժնի վերանորոգման աշխատանքների ժամանակ նշված պաստառը հանվել է և հնամաշ ու հետագա օգտագործման համար ոչ պիտանի լինելու պատճառով, վերանորոգման աշխատանքների ավարտից հետո չի փակցվել:

Դիտորդների խմբին առաջարկվում է ՁՊՎ-ներ կատարվող այցելությունների ժամանակ իրենց մոտ ունենան նշված պաստառը և տրամադրեն ՁՊՎ-ների վարչակազմերին:

ՀՀ ոստիկանության շտաբ